ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **մեկնարկ՝** 10. 03. 2025թ.
ժամը 12:00
ավարտ՝ 24. 03. 2025թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության կազմատնտեսական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ — Սարգիս Սայադյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Աննա Վարդանյան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Աննա Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀմ) — Լուսինե Աբովյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման ապրանքների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Ընդհանուր քանակը	Չափման միավորը	գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Ուղեգորգեր	160	քմ	2 720 000

«ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
2. «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
3. Տեղեկատվություն՝ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման մասին:
4. Տվյալներ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

5. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակցի որոշման վերաբերյալ:
6. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
7. «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

1. Տեղեկություն Armeps (eauction.armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

1.1 «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի մարտի 6-ը ժամը 15^{00}-ը, հակադարձ աճուրդը կայացել է 2025 թվականի մարտի 7-ին:

1.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի մեկն է:

1.3 «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոս	ՀՎՀՀ	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս
1	**«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ » ՍՊԸ**	ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ.Աստղաձոր 24փ.տ.1	**08430756**	vst-sky.llc@mail.ru Հեռ +374 94 17 03 92
2	**«Արմկարպետ» ՍՊԸ**	ք.Երևան, Մադոյան փ 9/1	**02267158**	vrej-avagyan@mail.ru Հեռ + 374 93 93 89 93

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0:

2. «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 Հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.2 Հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի՝ **«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ»** ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունը **գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28»** ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը՝ կասեցնել և **«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ»** ՍՊԸ-ին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և ներբեռնել համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0:

11.03.2025 թվականին ժամը 12:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

3. Տեղեկատվություն՝ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման մասին

3.1 Ընդունել ի գիտություն, որ «**ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ**» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը	Քանակը/ք. մ. /	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
					գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Ուղեգորգեր	2 720 000	160	«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ	46000000	20 %	55200000	2242350	20 %	2690820
2				«Արմկարպետ» ՍՊԸ	2265000	20 %	2265000	2265000	20 %	2718000

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0:

5. Տվյալներ՝ «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակցի որոշման վերաբերյալ

5. 1 Սույն ծածկագրով գնման ընթացակարգի հակադարձ աճուրդի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել **«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ**-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0:

6. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

6.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

6.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

7. «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

7. 1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով գնահատման արդյունքները ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊ** - ընկերությանը:

7. 2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

7. 3 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Սայադյան** _____

Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Վարդանյան** _____

Ա. Ավագյան _____

Քարտուղար՝ **Լ. Աբովյան** _____